

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/6

23 ապրիլի 2013թ.

Քննարկվեց «Անարանդ և Ռոբերտ Բեջանյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ 15.04.2013թ-ի թիվ 1 գանգատը «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 27.03.2013թ. թիվ 217987 որոշման դեմ:

«Անարանդ և Ռոբերտ Բեջանյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) գանգատում մասնավորապես նշված է.

2013 թ-ի հունվար ամսից փոխվել են հարկային հաշվետվություն ներկայացնելու ձևն ու կարգը: Նոր ձևի եկամտահարկի հաշվետվություն ներկայացնելու համար անհրաժեշտ է ունենալ նույնականացման քարտ, որն անձնագրային բաժանմունքները տալիս էին ձգձգումներով: «Վարչապետը հեռուստատեսությամբ հայտարարել է, որ այդ նույնականացման քարտերի ուղացման պատճառով հարկերը ուղացնելու համար վարչական տույժ չի նշանակվելու: Ընդ որում, վարչապետի կողմից չի նշվել հաշվետվությունները ուղացած ներկայացնելու ժամկետ: Նման պայմաններում 2013 թ-ի հունվար ամսվա հաշվետվությունը ուղացած ներկայացնելու մասին «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 27.03.2013 թ-ին կայացրած վարչական իրավախախտման թիվ 217987 որոշումը հակասում է «Վարչապետի կողմից հանրությանը հայտնած տեղեկատվությանը, առավել ևս, որ դա հարկային հաշվետվություն ներկայացնելու համար ստեղծված նորության առաջին ամսվան է վերաբերվում, իսկ դրանք ներկայացնելու ձևն ու կարգը ամբողջովին խորթ է և մատչելի չէ:

Ելնելով վերոգրյալից, ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 27.03.2013 թ-ին կայացրած վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 217987 որոշումը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և Մաշտոցի ՀՏ ներկայացուցչի բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն. «Որոշումը հայտարարվում է անհապաղ, գործի քննությունն ավարտելուն պես: Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնվում կամ ուղարկվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով»:

Քննարկվող դեպքում «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 27.03.2013թ. թիվ 217987 որոշման պատճենն ընկերությանն է ուղարկվել վերոգրյալ իրավանորմի պահանջների խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «Օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Բեկանել «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 27.03.2013թ. թիվ 217987 որոշումը և գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ